ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարությունը,

ղեկավարվելով երկու Պայմանավորվող պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու մտադրությամբ, եկամուտների կրկնակի հարկումը բացառելու նպատակով որոշեցին կնքել սույն Կոնվենցիան և համաձայնեցին հետևյալի մասին.

Գ Լ ՈՒ Խ 1
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ
ՀՈԴՎԱԾ 1
ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 2
ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտներից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից կամ եկամտի առանձին տարրերից, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարից գանձվող, ինչպես նաև գույքի արժեքաճի վրա տարածվող հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանի դեպքում՝

- շահութահարկ,
- եկամտահարկ

(հետագայում՝ հայկական հարկ).

բ) Սիրիայի դեպքում՝

- եկամտահարկ առևտրային, արդյունաբերական և ոչ առևտրային (անկախ անձնական մասնագիտություններ) շահույթից,
- եկամտահարկ աշխատավարձից և ռոճիկից,
- եկամտահարկ ոչ ռեզիդենտներից,
- եկամտահարկ շարժական և անշարժ գույքից ստացվող եկամտից,
- սահմանված կամ հետագայում սահմանվելիք լրացուցիչ գանձումներ՝ հաշվարկված վերը նշված հարկերի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի կամ որևէ այլ եղանակի հիման վրա

(հետագայում՝ սիրիական հարկ):

4. Կոնվենցիան կիրառվում է նաև սույն հոդվածի 1-ին կետի սահմանման համաձայն դասակարգված՝ ըստ էության համանման բոլոր հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կծանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված ցանկացած փոփոխության մասին:

ԳԼՈՒԽ 2
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» տերմինը, ենթատեքստից կախված, նշանակում է՝ Հայաստան կամ Սիրիա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն,

գ) «Սիրիա» տերմինը, միջազգային իրավունքի համաձայն, նշանակում է՝ Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքները, ներառյալ նրա ներքին ջրերը, տարածքային ծովը, այդ տարածքների ստորջրյա հատակը և դրանց վրայի օդային տարածությունը, որոնց նկատմամբ Սիրիան ունի ինքնիշխան իրավունքներ, և այլ ծովային տարածքները, որոնց նկատմամբ Սիրիան իրավունք ունի իրականացնելու ինքնիշխան իրավունքներ բնական պաշարների հետազոտման, օգտագործման և պահպանման համար,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

զ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենքներով իր կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ,

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից ծովային, գետային նավով կամ օդանավով կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցով իրականացվող ցանկացած փոխադրում՝ բացառությամբ, երբ այդպիսի փոխադրումն իրականացվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ և հարկային պետական ծառայության պետ կամ նրա լիազոր ներկայացուցիչ,

ii) Սիրիայի դեպքում՝ ֆինանսների նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, կամ եթե Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ի վիճակի չեն հասնելու միասնական կարծիքի՝ սույն Կոնվենցիայի 25-րդ հոդվածում նշված ընթացակարգի համաձայն, ունի այն նշանակությունը, որը նրան այդ պահին այդ Պետության օրենքով տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան:

ՀՈԴՎԱԾ 4
ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենսդրության համաձայն, ենթակա է հարկման այդ Պետությունում իր մշտական բնակության, ստեղծման և գրանցման վայրի, ռեզիդենտության կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը Պայմանավորվող երկու պետություններում էլ ռեզիդենտ է, ապա նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ ունի իրեն պատկանող մշտական կացարան. եթե նա երկու Պայմանավորվող պետություններում էլ ունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որի հետ ունի առավել սերտ անձնական և տնտեսական կապեր (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պայմանավորվող պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պայմանավորվող պետություններից ոչ մեկում չունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ ունի ընթացիկ կացարան,

գ) եթե նա երկու Պայմանավորվող պետություններում էլ ունի ընթացիկ կացարան կամ ոչ մեկում էլ այդպիսին չունի, համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է,

դ) եթե նա երկու Պայմանավորվող պետությունների քաղաքացին է կամ նրանցից ոչ մեկի քաղաքացին չէ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ, 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը Պայմանավորվող երկու պետությունների ռեզիդենտ է, ապա այդպիսի անձը համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որի օրենսդրության համաձայն ստանում է իր կարգավիճակը՝ որպես այդպիսին:

ՀՈԴՎԱԾ 5
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով Պայմանավորվող պետության ռեզիդենտն իրականացնում է կանոնավոր ձեռնարկատիրական գործունեություն մյուս Պայմանավորվող պետությունում:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

ա) կառավարման վայր.

բ) մասնաճյուղ.

գ) գրասենյակ.

դ) գործարան.

ե) արհեստանոց, և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետազոտման, օգտագործման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը, շինարարական, հավաքման կամ տեղակայման օբյեկտը կամ դրանց հետ կապված՝ վերահսկողական կամ այլ գործունեությունը կազմում են մշտական հաստատություն, բայց միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի, օբյեկտի կամ գործունեության տևողությունը գերազանցում է 6 ամիս ժամանակահատվածը:

«Այլ գործունեություն» տերմինը, ինչպես այն օգտագործվում է սույն կետում, ներառում է ձեռնարկության կողմից ծառայությունների (այդ թվում՝ խորհրդատվական ծառայությունների) մատուցումը ձեռնարկության վարձու աշխատողների կամ այդ նպատակով վարձված այլ անձնակազմի միջոցով:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության հետևյալ գործունեությունները մյուս Պայմանավորվող պետությունում չեն համարվում որպես մշտական հաստատության միջոցով իրականացվող.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարի պահումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարի սպասարկումը այլ ձեռնարկության կողմից՝ բացառապես մշակման նպատակով.

դ) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի սպասարկումը բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.

ե) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի սպասարկումը բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով:

5. Եթե անձը, չլինելով անկախ կարգավիճակով գործակալ, որին վերաբերում են 7-րդ կետի դրույթները, գործում է Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, համարվում է, որ այդ ձեռնարկությունն ունի մշտական հաստատություն առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում ցանկացած գործունեության առումով, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության

համար, եթե այդպիսի անձն այդ պետությունում ունի և սովորաբար օգտագործում է ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն՝ բացառությամբ այդպիսի անձի համար 4-րդ կետով սահմանափակված գործունեության տեսակների, որոնք եթե անգամ իրականացվում են գործունեության կայուն վայրի միջոցով, չեն դարձնում այդ գործունեության կայուն վայրը մշտական հաստատություն այդ կետի դրույթների շրջանակներում:

6. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից, եթե Պայմանավորվող պետության ապահովագրական ձեռնարկությունը 7-րդ կետում նշված անկախ գործակալի կարգավիճակ չունեցող անձի միջոցով մյուս Պայմանավորվող պետությունում ընդունում է ապահովագրական մուծումներ կամ ապահովագրում է այնտեղ հնարավոր ռիսկից, ապա համարվում է, որ ձեռնարկությունը ունի մշտական հաստատություն այդ մյուս Պետությունում (բացառությամբ վերապահովագրման դեպքերի):

7. Պայմանավորվող պետության ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող մյուս Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը հսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ հսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնըստինքյան այդ ընկերություններից մեկին չի վերածում մյուսի մշտական հաստատության:

ԳԼՈՒԽ 3
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 6
ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. ա) «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրվում է այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է այդ գույքը:

բ) Նավերը, նավակները կամ օդանավերը, ավտոմոբիլային փոխադրամիջոցները չեն դիտվում որպես անշարժ գույք:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալուց կամ օգտագործման ցանկացած այլ ձևից ստացված եկամտի նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից առաջացած եկամուտների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 7
ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունից ստացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով:
Եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, բայց միայն այն մասով, որ մասով վերագրվում է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույն կամ նման պայմաններում, նույնպիսի կամ նմանատիպ գործունեություն իրականացնող և միանգամայն ինքնուրույն գործող առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, ում մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է այդպիսի մշտական հաստատության նպատակների համար կրած՝ փաստաթղթերով հաստատված ծախսերի հանումներ, այդ թվում՝ ղեկավարման և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն բանից՝ կատարվում են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե նրա սահմաններից դուրս:

4. Մշտական հաստատությանը վերագրվող շահույթը կորոշվի ամեն տարի, միևնույն եղանակով, եթե միայն դրա փոփոխման համար հիմնավոր ու բավարար պատճառ չառաջանա:

5. Եթե մշտական հաստատությանը վերագրվող շահույթի որոշումը կարող է կատարվել ձեռնարկության տարբեր ստորաբաժանումների միջև շահույթի ընդհանուր գումարի համաչափ բաշխման հիման վրա, ինչպես ընդունված է այդ Պայմանավորվող պետությունում, ապա 2-րդ կետի դրույթները խոչընդոտ չեն լինի այդ Պայմանավորվող պետությանը՝ հարկվող շահույթը նման բաշխման միջոցով որոշելու համար:

6. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին նշված է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

ՀՈԴՎԱԾ 8
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Միջազգային փոխադրումներում ծովային նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այն Պետությունում, որտեղ գտնվում է նրա գրանցման վայրը: Այսպիսի շահույթը ներառում է ձեռնարկության կողմից այլ գործունեությունից ստացված շահույթը և, մասնավորապես, միջազգային փոխադրումներում ապրանքների կամ արտադրանքի տեղափոխման համար օգտագործվող բեռնարկղերի օգտագործումից կամ վարձակալության տալուց ստացված շահույթը՝ պայմանով, որ այսպիսի գործունեությունը վերագրելի լինի ձեռնարկության կողմից

միջազգային փոխադրումներում ծովային նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործմանը:

2. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային բնույթի գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

3. Սույն հոդվածի դրույթները չեն ընդգրկում այն շահույթը, որը ստացվում է Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետությունում այլ ձեռնարկություններին պատկանող ծովային նավերով, օդանավերով և ավտոմոբիլային փոխադրամիջոցներով ճանապարհորդության տոմսերի կոմիսիոն վաճառքից:

ՀՈԴՎԱԾ 9
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են ինչպես մի, այնպես էլ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են անկախ ձեռնարկությունների միջև ստեղծված պայմաններից տարբերվող պայմաններ, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որից մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Պետությունը գտնում է ճշգրտումն արդարացի: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի այլ դրույթները և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կարող են խորհրդակցել միմյանց հետ:

ՀՈԴՎԱԾ 10
ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժիններ

վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն, սակայն եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

Այս կետը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որտեղից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բոլոր տեսակի բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև այլ կորպորատիվ իրավունքներից, որոնք ենթակա են հարկային կարգավորման այնպես, ինչպես բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենքների, որի ռեզիդենտ է շահույթի բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստորեն վերաբերում է այդպիսի մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային: Այդ դեպքում, իրավիճակից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ համարվող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, այդ մյուս Պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստորեն վերաբերում է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային, և չի կարող ընկերության չբաշխված շահույթից հարկեր գանձել, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

ՀՈԴՎԱԾ 11
ՏՈԿՈՄՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, այդ Պետության օրենքների համաձայն. սակայն եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե դրանք ստացվում և փաստորեն տնօրինվում են այդ Պետության կամ այդ մյուս Պետության վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կամ կենտրոնական բանկի կողմից:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ հիպոթեքային ապահովումից և պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Սույն հոդվածի նպատակով ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում գտնվող հաստատուն բազայից, և պարտապահանջը, որի հիման վրա տոկոսները վճարվում են, փաստորեն վերաբերում է այդպիսի մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

6. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը՝ Պետությունն է, վարչատարածքային ստորաբաժանումը, նրա տեղական իշխանության մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց գործունեության արդյունքում է ստեղծվել պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա համարվում է, որ այդ տոկոսները առաջանում են այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների հետևանքով պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը, որի հիման վրա դրանք վճարվում են, գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը առաջվա պես հարկվում է Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

ՀՈԴՎԱԾ 12
ՌՈՅԱԼԹԻ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է, այդ Պետության օրենքներին համապատասխան. բայց այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված ռոյալթիի համախառն գումարի 12 տոկոսը:
Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոֆիլմերը կամ ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար ֆիլմերը կամ ձայնագրությունները, ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկությունների կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորման օգտագործման կամ օգտագործման իրավունքի տրամադրման համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում է ռոյալթին, իրականում կապված են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը՝ այդ Պետությունն է, այդ Պետության վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտը: Սակայն երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և

փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

ՀՈԴՎԱԾ 13
ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱԾ

1. 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում՝ Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մշտական հաստատության՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործվող գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային պատկանող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում օգտագործվող ծովային, գետային նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների կամ այդպիսի ծովային, գետային նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում օտարող անձը:

ՀՈԴՎԱԾ 14
ԱՆԿԱԽ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական ծառայություններից կամ անկախ բնույթի այլ համանման գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունը իրականացնելու նպատակով կանոնավոր կերպով իր տրամադրության տակ չունի հաստատուն բազա: Եթե նա ունի այդպիսի հաստատուն բազա, ապա այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ հաստատուն բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, վիրաբույժների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

ՀՈԴՎԱԾ 15
ԿԱԽՅԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե միաժամանակ կատարվում են հետևյալ բոլոր պայմանները.

ա) ստացողը ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում,

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից,

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային նավում, օդանավում կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 16
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 17
ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չնայած 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի աշխատող (ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը) կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի աշխատողի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված

եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Կոնվենցիայի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետությունում արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունից ստացված եկամուտը հարկվում է միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում արվեստի աշխատողը կամ մարզիկը, եթե այցելությունը այդ Պետություն հիմնականում իրականացվում է մեկ կամ երկու Պայմանավորվող պետությունների հասարակական հիմնադրամների կամ վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների միջոցներից:

ՀՈԴՎԱԾ 18
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ա) Պայմանավորվող պետության կամ վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից կամ դրանց կողմից ստեղծված հիմնադրամների միջոցներից այդ Պետությանը կամ նրա վարչատարածքային ստորաբաժանմանը կամ տեղական իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) այդ Պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. 15-րդ, 16-րդ և 19-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրության և կենսաթոշակների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 19
ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

1. Պայմանավորվող պետության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկինում կատարված վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում:

2. 1-ին կետի դրույթը չի կարող ազդել կենսաթոշակները հարկից ազատելուն վերաբերող՝ Պայմանավորվող պետության օրենքի դրույթների վրա:

ՀՈԴՎԱԾ 20
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

1. Ուսանողը, պրակտիկանտը կամ ստաժյորը, որոնք հանդիսանում են կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որոնք գտնվում են առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իրենց ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ մյուս Պետությունում չեն հարկվում իրենց ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումների առնչությամբ, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Համալսարանի կամ այլ բարձրագույն կրթական հաստատության ուսանողը կամ պրակտիկանտը, որոնք հանդիսանում են կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, չեն հարկվի առաջինը հիշատակված Պետությունում այդ Պետությունում իրենց մատուցած ծառայությունների դիմաց ստացած վարձատրությունից՝ պայմանով, որ այդպիսի ծառայությունները կապված լինեն նրանց ուսանելու կամ պրակտիկայի հետ, և այդ վարձատրությունը կազմի նրանց ապրուստի համար անհրաժեշտ վաստակը:

ՀՈԴՎԱԾ 21
ԴԱՍԱԽՈՍՆԵՐ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

Պայմանավորվող պետության ռեզիդենտը ենթակա չէ հարկման մյուս Պայմանավորվող պետությունում 2 տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում՝ այդ մյուս Պայմանավորվող պետության Կառավարության կողմից հավատարմագրված համալսարանում, գիտահետազոտական ինստիտուտում կամ այլ համանման ուսումնական հաստատությունում հետազոտման կամ դասավանդման համար ստացած վարձատրություններից:

ՀՈԴՎԱԾ 22
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Գ Լ ՈՒ Խ 4
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 23
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

Պայմանավորվող երկու պետություններում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջին Պայմանավորվող պետությունը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում՝ մյուս Պայմանավորվող պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի այն մասը, որը վերագրելի է այն եկամտին, որը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այն դեպքում, երբ, սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունից ստացած եկամուտը ազատված է հարկումից այդ Պետությունում, ապա այդ Պայմանավորվող պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել ազատված եկամուտը:

ԳԼՈՒԽ 5
ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 24
ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չեն ենթարկվում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել տվյալ Պետության քաղաքացիները:

3. Սույն հոդվածի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ տրամադրել մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին այնպիսի հարկային արտոնություններ, ինչպիսիք առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության կողմից շնորհվել են երրորդ Պետությունների ռեզիդենտներին գոյություն ունեցող հարկային համաձայնագրերի հիման վրա:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման այն նույն պայմաններով, որոնցով նվազեցվում են առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս:

Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին՝ այդ ձեռնարկության հարկման ենթակա գույքի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես որ պարտքը՝ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ վերահսկվում է նրանց կողմից, առաջինը հիշատակված Պետությունում չեն են-

թարկվում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության համանման ձեռնարկությունները:

ՀՈԴՎԱԾ 25
ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, սակայն ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է իրականացվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենսդրությունում օրենքում առկա որևէ ժամանակային սահմանափակման:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած կձգտեն լուծել փոխադարձ համաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ՝ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Սույն հոդվածի նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ: Իրավասու մարմինները խորհրդակցելով պետք է մշակեն համապատասխան երկկողմանի ընթացակարգ, պայմաններ, ձևեր և մեթոդներ՝ սույն հոդվածով նախատեսված փոխհամաձայնության ընթացակարգը կիրարկելու համար:

ՀՈԴՎԱԾ 26
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի դրույթների կամ Կոնվենցիայում ընդգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքների դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով այդ օրենքներով սահմանված հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին հոդվածով: Պայմանավորվող պետության ստացած

ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենքների սահմաններում ստացված տեղեկատվությունը, և կարող է հաղորդվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Կոնվենցիայով ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ կամ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկություններն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք տեղեկությունները կարող են հրապարակել բաց դատական նիստի կամ իրավական որոշումների ընդունման ընթացքում:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) ներկայացնել տեղեկատվություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

գ) ներկայացնել տեղեկատվություն, որը բացահայտում է որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ՝ տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

ՀՈԴՎԱԾ 27
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնությունների վրա:

Գ Լ ՈՒ Խ 6
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 28
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում, և վավերացման վերաբերյալ ծանուցումների փոխանակումը տեղի կունենա դիվանագիտական ուղիների միջոցով:

2. Կոնվենցիան ուժի մեջ կմտնի ծանուցումների փոխանակումից հետո, և նրա դրույթները կգործեն.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

բ) եկամտի այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված հարկերի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 29
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետության կողմից նրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցում ուղարկելով ոչ ուշ, քան Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո սկսվող օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ:

Այդ դեպքում Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման անուցագրի ուղարկման տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

բ) եկամտի այլ հարկերի առնչությամբ՝ դադարեցման ծանուցագրի ուղարկման տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող տարվա ընթացքում ստացված հարկերի նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է Երևանում քաղաքում 2005 թվականի հունիսի 29-ին, երկու բնօրինակով, հայերեն, արաբերեն և անգլերեն, բոլոր տարբերակները հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ՄՈՒՀԱՆԱԴ ԽԵԴԵՌ ՍԱԻԴ ԱՀՄԱԴ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումից խուսափելու մասին Կոնվենցիան կնքելիս ներքոստորագրյալները համաձայնեցին հետևյալ դրույթների շուրջ, որոնք կազմում են սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը.

24-րդ հոդվածի առնչությամբ համաձայնեցին, որ սիրիացիները, որոնք հանդիսանում են միայն Հայաստանի ռեզիդենտներ և հայերը, որոնք հանդիսանում են միայն Սիրիայի ռեզիդենտներ, սույն Կոնվենցիայի կիրառման ընթացքում ենթակա են հարկման իրենց ռեզիդենտության վայրի հարկման կանոնների համաձայն:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ իրենց համապատասխան Կառավարությունների կողմից պատշաճ ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Երևանում 2005 թվականի հունիսի 29-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ՄՈՒՀԱՆԱԴ ԽԵԴԵՌ ՍԱԻԴ ԱՀՄԱԴ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ